

1. Սերտիֆիկացման մասին տեղեկություններ

Եվրասիական համապատասխանություն (EAC) - համապատասխանության ղեկավարացիա՝ EAՁC N RU Կ-CN. AՃ75.B.00707: Փորձագիտական եզրակացություն՝ ապրանքը համապատասխանում է սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքների միասնական սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջներին եզրակացություն No 1908T/2017, 14.11.2017 թ.:

2. Արտադրանքի մասին հիմնական տեղեկություններ


Արտադրանքի անվանումը՝ Y-ձևի մեխանիկական մաքրման ֆիլտր:

Արտադրանքի նշանակումը՝ 301100/301200:

Արտադրողը (մատակարարը)՝ «TAURUS INDUSTRIAL GROUP LIMITED»:

Օգտագործման նպատակը՝ օգտագործվում է տաք և սառը ջրամատակարարման, սեղմված օդի, յուղի և հեղուկ ածխաջրածինների համակարգերում՝ մեխանիկական խառնուրդներից նախնական մաքրման համար:

3. Հիմնական տեխնիկական տվյալները և բնութագրերը




Աղյուսակ 1

	Անվանումը	Քանակը	Նյութը
1	Կորպուս	1	ЛС 59-2 ГОСТ 15527-2004-ի համաձայն
2	Խցան	1	ЛС 59-2 ГОСТ 15527-2004-ի համաձայն
3	Զտիչ տարր	1	Չժանգոտվող պողպատ 08X18H10՝ ГОСТ 5632-2014-ի համաձայն
4	Պնդօղակ	1	Ֆտորոպլաստ՝ ГОСТ 10007-80-ի համաձայն

Կցման պարուրակները ГОСТ 6357-ի համաձայն:

Աղյուսակ 2


Արտիկուլ	DN	Զանգվածը (գ)	Կցման պարուրակը	Զտիչ տարրի բջջի չափը (մկմ)	Աշխատանքային ջերմաստիճանների ընդդրվումը (° C)	Ընդհանուր չափերը (մմ)			Զտիչ տարրի չափերը		Անվանական ճնշումը Py (PN) մՊա (կգս/սմ2)	Մաքուր ֆիլտրի թողունակության գործակիցը Kvs (մ3 / ժ)	Բանալու երակի լայնությունը (մմ)		Զտիչ տարրի մակերեսը (մմ2)
						A	B	C	A	B			S1	S2	
301101	15	G 1/2 - A	185	500	-20; +120	58	45	59	18	32,5	2,0 (20,0)	5,48	25	20	1837
301102	20	G 3/4 - A	292	500	-20; +120	69	53	69	23,5	37,8	2,0 (20,0)	8,93	31	23	2790
301103	25	G 1 - A	485	500	-20; +120	83	62	83	28,5	48,2	2,0 (20,0)	14,9	39	27	4315
301201	15	G 1/2 - A	172	500	-20; +120	63	45	59	18	32,5	2,0 (20,0)	5,48	25	20	1837




Մաքուր ֆիլտրի սպառման և անկման բնութագիրը:

4. Մոնտաժ և շահագործում

4.1 Ֆիլտրը կարելի է տեղադրել ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց դիրքում: Ֆիլտրի խցանը պետք է ուղղված լինի դեպի ներքև, իսկ կորպուսի վրայի սլաքը պետք է համընկնի գտվող միջավայրի հոսքի ուղղության հետ:



Հորիզոնական մոնտաժ



Ուղղահայաց մոնտաժ

4.2 Մոնտաժի ժամանակ պետք է խցանի մուտքի համար տարածք նախատեսել՝ ֆիլտրի սպասարկման աշխատանքների համար:

4.3 Պարուրակային միացումների հերմետիկացումը պետք է իրականացվի ստանդարտ պնդացնող նյութերի միջոցով:

4.4 Փականային սարքը պետք է տեղադրել ֆիլտրի առջևում՝ հոսքի ուղղությամբ:

4.5 Ֆիլտրի մոնտաժի ժամանակ չի թույլատրվում գերազանցել ստորև բերված աղյուսակ 3-ում նշված ձգման պահը:

Աղյուսակ 3

	DN 15	DN 20	DN 25
Ձգման առավելագույն պահը, ն · մ	30	40	60

5. Նկարագրությունը և աշխատանքը

5.1 Ֆիլտրի կորպուսի ներսում՝ խցանի (2) տակ, տեղադրված է գտիչ տարրը (3), որն ունի չժանգոտվող պողպատից մանր ցանցով գլանի տեսք: Մուտքի խողովակաձյուղից Ֆիլտրի պիտակի վրայի սլաքի ուղղությանը համապատասխանող հոսքի անցման ընթացքում հոսքի մեջ գտնվող փոքր մասնիկները մնում են գլանաձև գտիչ տարրի պատերին՝ խոչընդոտելով դրանց մուտքը ելքի խողովակաձյուղ:

5.2 Ֆիլտրի կորպուսի էլիպսաձև խցիկի շնորհիվ, որտեղ գտնվում է գտիչ տարրը, մեծացված է մակերեսը՝ ջրի հոսքի անցման համար: Այս լուծումը բարելավում է արտադրանքի հիդրավլիկ բնութագրերը և երկարացնում գտիչ տարրի սպասարկման (մաքրման) ժամկետները:

5.3 Ֆիլտրը ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել Աղյուսակ 2-ում նշված տեխնիկական բնութագրերը:

5.4 Ֆիլտրի ընտրության համար՝ նրա հիդրավլիկ դիմադրությունը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$\Delta P = \left(\frac{Q}{Kvs} \right)^2$$

ΔR - ֆիլտրի վրա ճնշման անկում (բար)
 Q - ֆիլտրի միջով անցնող հաշվարկված սպառումը (մ³ / ժ)
 Kvs - մաքուր ֆիլտրի թողունակության գործակիցը (նշված է Աղյուսակ 2-ում)

6. Տեխնիկական սպասարկում

6.1 Ֆիլտրը պետք է շահագործվի 3-րդ կետում նշված բնութագրերին համաձայն:

6.2 Մեխանիկական խառնուրդների բարձր պարունակությամբ խողովակաշարային համակարգերում ֆիլտրը օգտագործելիս խորհուրդ է տրվում պարբերաբար մաքրել ֆիլտրը, ինչի կարիքի մասին կարող է վկայել ֆիլտրի վրա ճնշման անկումը 50 կՊա-ով և ավել:

6.3 Ֆիլտրը մաքրելու համար՝ անհրաժեշտ է փակել ֆիլտրի առջևում գտնվող փականային տարրը: Ետ պտուտակեք խցանը, հանեք գտիչ տարրը և լվացեք այն ջրի տակ: Տարրը հետ տեղադրեք խողովակաձյուղի վրա, ամրացրեք այն խցանով՝ խուսափելով ֆտորոպլաստե օղակը վնասելուց:

6.4 Այլ արտադրողների գտիչ տարրերը օգտագործելու դեպքում արտադրողը պատասխանատու չէ ֆիլտրի աշխատանքի որակի համար:

7. Արտադրողի ռեսուրսները, ծառայության և պահպանման ժամկետները և երաշխիքները

7.1 Մեխանիկական մաքրման ֆիլտրի ծառայության միջին ամբողջական ժամկետը 20 տարի է:

7.2 Արտադրողը (մատակարարը) երաշխավորում է արտադրանքի աշխատունակությունը և 3, 4, 6-րդ կետերում նշված MI 300.01.000 PIC պահանջների պահպանման դեպքում արտադրանքի անվտանգության պայմանների համապատասխանությունը:

7.3 Շահագործման երաշխիքային ժամկետն է արտադրանքի շահագործման օրվանից սկսած 12 ամիս կամ արտադրող գործարանից արտադրանքը բեռնելու պահից 36 ամսից ոչ ավել:

7.4 Երաշխիքը չի գործում հետևյալ թերությունների ծագման դեպքում.

- Արտադրանքի կոնստուկցիայի մեջ արտաքին միջամտություն;
- Արտադրանքի մասերի նկատմամբ ագրեսիվ նյութերի ազդեցություն;
- Արտադրանքի վրա չափազանց մեծ ուժի ազդեցություն;
- Կրակ, տարերք, արտակարգ հանգամանքներ:

7.5. Երաշխիքը չի գործում նաև այն դեպքերում, եթե արտադրող գործարանի պիտակը մասամբ / ամբողջովին փոխվել, ջնջվել, հեռացվել է կամ անվերծանելի է:

7.6 Արտադրողը իրավունք ունի արտադրանքի կոնստրուկցիան ձևափոխել, եթե այդ փոփոխությունները չեն ազդում նշված տեխնիկական բնութագրերի վրա:

7.7 Ապրանքի որակի նկատմամբ գանգատների ներկայացման դեպքում գնորդը պետք է տրամադրի հետևյալ փաստաթղթերը.

- Գնորդի /կազմակերպության անունը, գնորդի/կազմակերպության հասցեն, կոնտակտային հեռախոսահամարը, արտադրանքը տեղադրած կազմակերպության անունը, արտադրանքի տեղադրման հասցեն, ինչպես նաև արտադրանքի և դրա անսարքության համառոտ նկարագրությունը պարունակող հայտ;
- Արտադրանքի ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ (դրամական / ապրաքային կտրոն, հաշիվ-ապրանքագիր, ստացական և այլն);
- Արտադրանքի անսարքությունը հաստատող լուսանկարներ;
- Այն համակարգի հիդրավլիկ փորձարկման ակտը, որի մեջ տեղադրվել է արտադրանքը;
- Երաշխիքային կտրոնի պատճենը՝ բոլոր լրացված պունակներով:

8. Պահպանման և փոխադրման պայմանները

Արտադրանքները պետք է փոխադրվեն արտադրող գործարանի փաթեթավորման մեջ՝ տվյալ փոխադրամիջոցի համար գործող կանոններին համաձայն: Պահպանումը 5 (ՕՋ) պայմանի, GOST 15150-ի համաձայն:

9. Ընդունման փորձարկություններ

Ֆիլտրերի խմբաքանակը ճանաչվում է որպես սպասարկելի, ընդունված է 100% հսկողության ներքո, երբ $P_{np} = 1.5 * P_y$:

Արտադրման ամսաթիվը		Որակի վերահսկման նշանը	
--------------------	--	------------------------	--

10. Երաշխիք

Երաշխիքային կտրոն № _____

Անվանումը	Y-ձևի մեխանիկական մաքրման ֆիլտր
Արտիկուլ	
Քանակը	
Առևտրային կազմակերպության անունը և հասցեն	
Վաճառքի ամսաթիվը	

Վաճառողի ստորագրությունը

Առևտրային կազմակերպության կնիքը կամ դրոշմը

Ես համաձայն եմ երաշխիքի պայմանների հետ

Գնորդի ստորագրությունը

Ապրանքի վերադարձման նշանը _____

Ամսաթիվը _____

Ստորագրություն _____



15/F Radio City, 505 Hennessy Road,
Causeway Bay, Hong Kong
+852 800 931 450
sales@miraya.world
www.miraya.world

2019.05